զգուշարն զայն 'ի գիւղականաց և չթողուլ պահանջել ինչ 'ի վանականաց, և գրեաց վասն այսր հրաման, և նորա կալեալ զարս 8 'ի քրիստոնէից և 'ի տաճկաց Բեթղեհէմի և եդ 'ի տուն Նախիվին իբր 'ի պատանդ մինչեւ հատուցեն զհարկն։ Իսկ նոքա զկնի տօնի Ծննդեան բռնացան 'ի վերայ երից վանաց որ անդ, և սարսէին զնոսա հատուցանել զհարկն, և 'ի բացասել նոցա՝ լցան բազմութեամբ նախ 'ի վանս Լատինաց և խափանեցին զպաշտամունս և զպատարագս նոցա, նեղէին և չարչարէին. կամեցան փախչիլ՝ այլ ոչ կարէին, զի փակեալ էին զճանապարհս, և չգըտեալ զայլ հնարս եւուն 15 քսակս և զերծան 'ի ձեռաց նոցա։ Անտի խուժեցին 'ի վանս Ցունաց, և կալեալ զերիս գիւղացի քահանայս արկին 'ի բանտ, զորս թողեալ էին միաբանք սակս պաշտաման եկեղեցւոյ եւ ինքեանք փախուցեալք։ Եւ ապա եկեալ բազմութեամբ մտին 'ի վանս Հայոց, եւ կալեալ զՏեսուչն տագնապաւ պահանջէին 'ի նմանէ զ15 քսակն, և նա խոստացաւ երթալ բերել զայն յԵրուսաղէմէ, և այնպէս զերծաւ 'ի ձեռաց նոցա։ Իբրեւ տեսին թէ ոչ դարձաւ նա 'ի քաղաքէն և ոչ եկաց 'ի խոստման իւրում, կալան զԼուսարար Պետրոս վարդապետն և մատնեցին 'ի գանս և 'ի չարչարանս. խափանեցին զժամերգութիւն և զպատարագն, և ժողովեալ զամենայն միաբանս եդին 'ի միում սենեկի, և լուցին անդ հուր, զի շնչասպառ մեռցին 'ի ծխոյ անտի, եւ ինքեանք մտեալ յեկեղեցին կողոպտեցին զսպասս նորա, ապա խորտակեցին զդուռն սենեկի Տեսչին և զդարանս որ անդ՝ և յափշտակեալ զոր միանգամ գտին անդ և ելեալ գնացին։ Իբրեւ լուան զեղեալսն Խորհրդականք յԵրուսաղէմ՝ չոքան պատմեցին Քաղաքապետին, եւ նա արար պատասխանի թէ արտաքոյ պարսպի քաղաքին չկարեմ իշխել, ձեզ պարտ է հոգալ զգործս ձեր. ապա խոստացան հատուցանել զ15 քսակն զկնի 40 աւուրց, եւ գրեալ ծանուցին զիրսն Կուսակալին, թէ այնչափ համարձակութիւն գիւղականաց 'ի Նախիվանն էր՝ որ միաբանեալ էր ընդ Քաղաքապետին։

Ի սոյն աւուրս յորդ անձրեւաց քակեալ էր որմն պարտիզի իմիք, և 'ի շինելն զայն Հայոց առանց շաղախի, կա-